**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ**
**ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 387 – Ա 11 հոկտեմբերի 2019 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԼՈՒՍԱԿՈՒՆՔԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼԻԼԻԹ ԳԱՍՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 226-րդ հոդվածի,«Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանպետի պաշտոնակատար Լուսինե Վարդանյանի Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Լուսակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում կատարված ուսումնասիրությունների վերաբերյալ 2019 թվականի սեպտեմբերի 27-ի N Ն/2903-2019 և նույն վարչության պետի տեղակալ Սևակ Դվոյանի 2019 թվականի հոկտեմբերի 10-ի Ն/3085-2019 զեկուցագրերը

կարգադրում եմ՝

1. 2019 թվականի հոկտեմբերի 11-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Լուսակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիլիթ Գասոյանի նկատմամբ աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար կիրառել «Խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

11.10.2019

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: SANOSYAN GNEL 1710830069

**Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**
**ք.Գավառ**